16377

361
и-58

1911.

2010

361
Ա-58

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՀԱՇԻՒ

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

## ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

**1910 թ.**

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
Էլէքտրոտպարան «ԷՊՕԽԱ» Գանովսկայա փող. № 3.
1911

7142
370
Չ104-ՀԱ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

*Թիֆլիսի Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան ընդհանուր ժողովի կայացած 1910 թ. Մարտի 28-ին։*

Ընկերութեան նախագահուհի օր. Մ Բաստողեան բանալով ժողովը, երբ ներկայ էր ըստ կանոնադրութեան անդամուհիների պահանջուած օրինական թիւը՝ առաջարկեց ընտրել ընդհանուր ժողովի նախագահուհի և քարտուղար։

Միաձայն ընտրուեց նախագահ տիկ. Երանուհի Յարութիւնեան և քարտուղար տիկ. Շուշանիկ Տարիլեան։

Վարչութեան քարտուղար տ. Խօջամիրեանը կարդաց 1909 թ. ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, որը ընդհանուր ժողովի կողմից ընդունուեց և հաստատուեց. կարդաց նաև 1909 թ. վարչութեան գործունէութիւնը, որից յետոյ նախագահուհին առաջարկեց 1909 թ. հաշուի ընթերցումը, սակայն ընդհանուր ժողովը աւելորդ գտաւ այդ, առարկելով՝ որ իւրաքանչիւրն արդէն ծանօթ է վերոյիշեալ հաշուի հետ։

1004
15361

Տիկ. Մամուլեանը հարց բարձրացրեց փոփոխել հաշուետուութեան ներկայ ձևը, համարելով այդ անկանոն. այդ առթիւ տեղի ունեցան զանազան թեր և դէմ կարծիքներ, որից յետոյ տ. Վ. Միլեանը իբրև այդօրինակ հաշիւների հետ լաւ ծանօթ, իր կողմից պատասխանեց, որ դրանք շատ չնչին սխալներ են, որոնց կարելի է ուղղել միւս անգամ։

Գանձապահուհի տիկ. Պետրոսեանը կարդաց 1910 թ. նախահաշիւը, որի առթիւ նախագահուհին խնդրեց ժողովականներին յայտնել իրանց կարծիքները։ Եղան նկատողութիւններ վարժուհու ռոճկի վերաբերմամբ։ Ժողովականներից մէկը գտնում էր, որ այդ ռոճիկը քիչ է. իսկ դրան առարկեցին մի քանիսը, որ ընդհակառակը բաւարար է, քանի որ բացի ռոճիկը, նա ստանում է և այլ յարմարութիւններ։ Հէնց ինքը վարժուհի օր. Մ. Տէր-Սարգսեանը՝ ասում է, որ գոհ է եղած պայմաններից։

Այնուհետև ժողովի նախագահուհին հարցնում է թէ՝ ուրիշ որ-

2002

կարողութիւններ չունեին նախահաշուի վերաբերեալ։ Ժողովը ոչինչ չառարկեց դրա դէմ։

Օր. Ս. Բայտողօլեան ընկերութեան միջոցները աւելացնելու համար առաջարկում է ժողովին, ընդունել որբանոցում գիշերօթիկներ վճարով, առայժմ իբրև փորձ մի քանիսին, իսկ ապագայում ի նկատի ունենալով դրանից առաջացած օգուտը, կարելի է աւելացնել գիշերօթիկների թիւը, և պահել առանձին բնակարանում. իր կարծիքով այդ միջոցով կարելի է բարելաւել ընկերութեան նիւթական դրութիւնը և կարելի կլինի աւելացնել որբերի թիւը։ Այդ հարցի շուրջը խօսում են ժողովականներից մի քանիսը. տ. Վ. Յովհաննիսեանի ասելով, ոչ թէ մի քանի գիշերօթիկներ, այլ եթէ շատ էլ պահեն ընկերութեան միջոցները չեն աւելանայ, քանի որ նրանց համար առանձին ծախս է հարկաւոր։

Տ. Զմշկեան-Թալանթարեանը համամիտ լինելով այդ կարծիքին իր կողմից աւելացնում է թէ՝ բացի այն, որ ընկերութեան միջոցները դրանով չի աւելանայ, կփոխուի նաև որբանոցի կոչումը և քանի, որ ինքը իբրև մանկավարժ առիթ է ունեցել ուսումնասիրելու մանուկների հոգեբանութիւնը, գտնում է, որ ընդունելով որբանոցում աւելի լաւ պայմաններում ապրած երեխաների, կխանգարուի որբերի անդորր կացութիւնը։

Տիկ. Ս. Պետրոսեանը յայտնում է, որ ինքն էլ հակառակ է այդ ձևի գործունէութեան, մանաւանդ, որ իր՝ կարծիքով այդ՝ կերպ, այսինքն գիշերօթիկներ պահելով, չի էլ աւելանայ ընկերութեան միջոցները, քանի որ իւրաքանչիւր որբի համար ծախսւում է ամսական 13 ր. 50 կոպ. և եթէ ամեն մի գիշերօթիկից ստացուի ամսական 15 ր. ու մնայ օգուտ նոյնիսկ 5 ր. (ամսական) այնուամենայնիւ անկարող կլինեն աւելացնելու որբերի թիւը, որովհետև այդ օգուտը կգործադրուի բնակարանի վարձը աւելացնելու, նաև ծառայողների ռոճիկը, բացի դրանից ինչպէս նկատեցին ուրիշները դրանով փոխւում է որբանոցի ներկայ անդորր կացութիւնը և կոչումը. տիկնոջ կարծիքով պէտք է դիմել աւելի նպատակայարմար միջոցների։

Օր. Ս. Քոչարեանի ասելով գիշերօթիկների գոյութիւնը նախանձ պէտք է առաջացնէ որբերի մէջ, այդպիսի օրինակներ շատ են եղել. բացի դրանից, մեծ պատասխանատուութիւն է հարկաւոր, նաև հսկողութիւն, մանաւանդ վարակիչ հիւանդութիւններ ստանա-



լու դէպքում. հէնց այժմ երբ որբանոցում կայ գլխի քոս հիւանդութիւն, որից վարակուել են մի քանիսը։

Օր. Բայտողօլեան սրան պատասխանում է թէ երեխաները ոչ թէ մէկը միւսից են վարակուել, այլ մի շնից, որի հետ խաղալիս են եղել և որ այդպիսի դէպքերում վարչութիւնը միշտ ուշադիր է լինում ու կարևոր բժշկական միջոցների է դիմում. և այդ երեխան երեք տարի է մեզ մօտ է և ոչ ոք նրանից չէ վարակւում։

Տիկ. Կ. Դաւթեան առաջարկում է ունենալ գիշերօթիկներ բայց բոլորովին առանձին բնակարանում, հեռու որբանոցից, որպէսզի չփոխուի որբանոցի դրութիւնը և նախանձ չզարթնի երեխաների մէջ։

Օր. Նալբանդեան նկատում է, որ ճիշտ է, որբանոցը զուտ որբանոց է, այնտեղ պէտք է պատսպարուեն միայն որբ երեխաներ. գիշերօթիկ ընդունելով, բնականաբար փոխւում է որբանոցի անունը. դառնալով պանսիոն, գիշերօթիկ դպրոց, այնպէս որ ցանկալի կլինէր չարծարծուէր այդ հարցը։

Օր. Ս. Գալաչեան յայտնում է, որ գիշերօթիկներ եթէ լինեն էլ, պէտք է ընդունել ոչ աւելի 6 տարեկանից, աչքի առաջ ունենալով այն շատ կարևոր հանգամանքը, որ երեխաները նոյն հոգով և նոյն ուղղութեամբ կրթուեն ու դաստիարակուեն, ինչպէս որբերը։

Պ. Պետրոսեան կարծում է, որ ոչ մի օգուտ չի լինելու մի երկու գիշերօթիկ պահելով, քանի որ փորձը ցոյց է տուել շատերին, և որ պէտք է փոխուի ընկերութեան ամբողջ կանոնադրութիւնը։

Օր. Բայտողօլեան ասում է, որ շատ ցանկալի կլինէր այլ կերպ աւելացնել ընկերութեան միջոցները, օրինակ. բանալով լուացարան կամ փուռ, բայց դրանց համար անհրաժեշտ է ունենալ սեպհական բնակարան, և որովհետև այդպիսին չկայ ներկայումս, ուստի իր կարծիքով բարւօք է համարում առաջարկել ժողովին առայժմ ընդունել գիշերօթիկներ, որոնցից բացի օգուտից՝ ոչ մի վնաս չի լինի։

Տիկ. Վ. Օրբէլին հաստատում է օր. Բայտողօլեանի կարծիքը, աւելացնելով, որ ամեն մի ծնող իր ընտանիքում ընտանեկան պայմանները բարելաւելու համար, կարողանում է օգտուել այդ միջոցից, ինչու մենք չենք կարող նոյն միջոցը գործադրել որբանոցի համար։ Եթէ ասենք նախանձին, այդ և ուսումնարանում կարող է զարթնել ծնող ունեցող երեխաներին տեսնելով։

Ժողովի նախագահ տ. Ե. Յարութիւնեանը ամփոփելով բոլորի

ասածները, այդ առթիւ ասում է, որ եթէ գիշերօթիկներ ընդունուին վճարով, անպայման հարկաւոր է առանձին բնակարանում պահել նրանց, բոլորին զատուած որբանոցից, որպէսզի չխախտուի որբանոցի անդորր դրութիւնը, մանաւանդ, որ որբանոցում 3—4 հոգի գիշերօթիկ ընդունելով ամսական 15 րուբլով, այդպիսով չի կարելի բարելաւել ընկերութեան դրութիւնը և աւելացնել որբերի թիւը, քանի որ կաւելանան նաև ծախսերը. բայց և այնպէս այդ հարցը մանրամասն քննելու համար առաջարկում է ընտրել մի մասնաժողով. այդ առաջարկին հաւանութիւն է տալիս ժողովը։

Յամենայն դէպս մինչ հարցի վերջնական որոշում ստանալը ընդհ. ժողովը ընդունեց վարչութեան առաջարկը՝ այն է առժամանակ 1—2 հոգի վճարով ընդունել փորձի համար։

Ընտրւում են մասնաժողովի անդամներ տ. տ. Գուլիև Աննա, Ղամբարեան Նունէ, Միլեան Վարվառէ, Ձմշկեան-Քալանթարեան, Կոյս Բէրուչեան, օր. օր. Գալաչեան Ս. և Նալբանդեան Հ.։

Ապա ժողովը անցնում է ընտրութիւններին մասնակցութեամբ 48 անդամների։

Հերթական կարգով դուրս գնացող վարչութեան անդամուհիներ տ. տ. Ս. Խօջամիրեանին և կ. Դաւթեանին. ժողովը վերընտրեց միաձայն։ Վարչութեան անդամուհի օր. Ս. Քոչարեան հրաժարուեց վարչութեան կողմից ժամանակ չունենալու պատճառով։ Ձայների առաւելութեամբ ընտրուել են վարչութեան նոր անդամուհիներ տ. տ. Նունէ Ալիբէգեան. Գայիանէ Խունունց, ընտրուելուց յետոյ տիկ. Գայիանէ Խունունց հրաժարուեց և ցանկացաւ լինել լոկ փոխանդամուհի։ Ընտրուել են նաև փոխանդամուհիներ, տիրուհի Զարթեգեան Աննա. տ. տ. Գասպարեան Նատալիա, Ձմշկ.-Քալանթարեան Վարվառէ, տէր. Տարխէլեան Շուշանիկ. վերստուգիչ յանձնաժողովի անդամներ տ. տ. Վ. Միլեան, Մ. Կաֆեան և օր. Հ. Նալբանդեան։ Փոխանդամուհիներ օր. Ս. Ստեփանեան և օր. Ս. Գալաչեան։

Ժողովը փակուեց ժամը 4-ին։

Նախագահուհի՝ Ե. Յարութիւնեան

Քարտուղարուհի՝ տ. Շուշանիկ Տարխէլեան



## ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ 1910 ԹՒԻ

Օր. Քայսողլեան Սուսաննա—նախագահ
Իշ. Արղութեան Աննա
Կոյս Ընֆիաճեան Իսկուհի
Տիկ. Դաւթեան Կատարինէ
Տիկ. Պետրոսեան Սաթենիկ—գանձապահ
Տիկ. Օրբելի Վարվառէ
Օր. Փուզինեան Աննա—փոխ. նախագահ
Տիկ. Ալիբէգեան Նունէ
Տիկ. Խօջամիրեան Սաթենիկ—քարտուղար

Փոխ—անդամներ.

Տիկ. Խունունց Գայիանէ
Տիկ. Զարթեղեան Աննա
Տիկ Գասպարեան Նատալիա
Տիկ. Ձմշկեան-Քալանթարեան Վարվառէ
Տէր. Տարխէլեան Շուշանիկ

Վերստուգիչ Յանձնաժողովի անդամներ.

Տիկ. Միլեան Վարվառէ
Տիկ. Կաֆեան Մարիամ
Օր. Նալբանդեան Հայկանուշ

Փոխ—անդամներ.

Օր. Ստեփանեան Սոֆիա
Օր. Գալաչեան Սոֆիա

# ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1910 ԹՒԻ

1910 թւի Մարտի 28-ի ընդ. ժողովում վարչութեան անդամուհիների ընտրութիւնից յետոյ, վարչական առաջի նիստում, նախագահ. ընտրւեց օր. Ս. Բայտողեան, փոխ նախագահ. օր. Ա. Փուղինեան, գանձապահ. տիկ. Ս. Պետրոսեան և Քարտուղար՝ տիկ. Խօջամիրեան։ Վարչութիւնը աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ որբանոցի բացման օրից ընդունուած որբերի գոնեա մի քանիսի ազգականների տնտեսական դրութիւնը կարող էր բարելաւուած լինել, դիմեց վերոյիշեալ որբերի բարեկամներին թէ անձամբ և թէ նամակներով՝ խնդրելով, որ օգնեն նրանք կամ նիւթապէս և կամ հանեն որբանոցից, որպէս զի նրանց փոխարէն հնարաւորութիւն ստեղծւի ընդունելու աւելի թշւառների։ Բայց այդ դիմումները մնացին անհետեւանք։

Հանեց որբանոցից, առանց վարչութեանս դիմումին որբ Սիրանոյշ Պետրոսեանին իր մօրաքոյրը դեկտ. ամսում ասելով, որ այժմ ինքը կարող է խնամել իր քրոջ աղջկանը։ Նրա փոխարէն պէտք է ընդունուի կանդիդատ՝ որբ Աղաբաբեանը։

Գիշերօթիկ Նունէ Տէր Յակոբեանին նոյնպէս տարաւ որբանոցից իր հայրը, ցանկանալով տեղաւորել նրան որևէ ռուսական ընտանիքում։

Ընդունւեց վճարով բոլորովին որբ Նունէ Բաղչեանը, վարչութիւնս ի նկատի ունենալով նրա նիւթական աննախանձելի դրութիւնը, համաձայնեց պահել նրան ամսական 13 ռուբ., որը պարտաւորւեց վճարել նրա խնամատարը. բացի այդ յանձն առնելով հոգալու նաև որբի թէ բժշկական և թէ ուսումնական ծախքերը։

1910 թւի ընթացքում որբանոցում պատսպարւել են 22 որբ երեխաներ, որոնք բոլորն էլ յաճախել են քաղաքիս զանազան ուսումնարանները։

Երեխաները համարեա բոլորը փոխադրուել են հետևեալ դասարանները, բացի Աբգար Փիլիպոսեանից, որը բժ. Բուլոցկու մօտ երկար ժամանակ բժշկւում էր գլխի քօս հիւանդութիւնից «ռէնդգէնեան» ճառագայթներով և շնորհիւ խիստ ցաւերի անկարող էր կանոնաւոր սովորել, իսկ այժմ նա բոլորովին առողջ է։ 2) Անահիտ Սուլթանեանը հասակի փոքրութեան իսկ 3) Յարութիւնեանը թոյլ ընդունակութեան պատճառով, վարչութիւնս սկզբում որոշել էր ամառային ամիսներին որբերին պահել Թիֆլիսում, սակայն թէ կառավարչուհու հիւանդութեան շնորհիւ, որ չէր կարող մնալ քաղաքում, թէ որբանոցի երկու սենեակի վերանորոգման և թէ մանաւանդ, խօլերայի մօտալուտ վտանգը ի նկատի ունենալով հարկադրուեցին ուղարկել «Պրիւտ» ամառանոցը։

Որբանոցի բնակարանը փոքր ինչ ընդարձակելու համար աւելացրին մի սենեակ, (մեծ տղաներին առանձնացնելու համար) որի համար ծախսուեց մօտաւորապէս 200 ր.։

Որպէսզի վարչութիւնս մի անգամ ընդ միշտ ապահովուած լինի որբանոցի բնակարանի առթիւ առաջացած խոչնդոտներից որը հէնց բացման օրից վարչութեանս համար դարձել է անլուծելի մի խնդիր, այն է, որ հեշտութեամբ բնակարան չեն տալիս, կամ թէ պահանջում են բարձր գներ, որոշեց առաջիկայ ընդհ. ժողովում առաջարկել ընտրելու մասնաժողով, որը վարչութեան հետ միասին զբաղուէր սեփական բնակարան ձեռք բերելու հարցով, որի շնորհիւ արդէն հնարաւորութիւն կստեղծուէր ձեռնարկել, որևէ գործի և աւելացնել որբերի թիւը։

1910 թւի ընթացքում ընկերութեանս օգտին վարչութիւնս կազմակերպել է մի զբօսանք ապրիլ ամսում, որից ստացել է զուտ արդիւնք 705 ր. 2 կ. մի ներկայացում, որից ստացել է զուտ արդիւնք 473 ր. 20 կ.։

Նւէրներ ստացել է պ. պ. Տ. և Պ. Վարդանեաններից ի յիշատակ իրանց հօր Գ. Ց. Վարդանեանի 300 ր. ժողովարանի աւագների խորհրդից 100 ր. քաղաքային վարկի ընկերութիւնից 100 ր. քաղաքային ինքնավարութիւնից 100 ր. պ. Վարլամ Խրիստափորովիչ Կուսիկեանի ընտանիքից ի յիշատակ նրան՝ հանգուցեալի, 100 ր.։ Տ. Եղիսաբէթ Ենիկոլոպեանից 50 ր. իր սկեսրոջ յիշատակին, տ. Սօֆիա Գրիգորեանից ի յիշատակ իր ամուսին Զաքարեա Գրիգորեանի 50 ր. հանգուցեալ տ. Օլգա Աւետիսեանի որդկերանցից մօր դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն 30 ր. օր. Ն. Մ.-ից 30 ր., տ. Մարեամ Կաֆեանից իր հօր յիշատակին 25 ր., օր. Բ.-ից ի յիշատակ բժ. Արտ. Գրիգորեանի 25 ր., իշ. Աննա Արղութեանից ի յիշատակ բժ. Աղամալեանի 25 ր., տ. Շուշանիկ և պ. Գասպար

տէր-Մարգարեաններից հանգուցեալ Բուդղան Դօլուխանեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն 25 ր., տ. և պարոն Գրիգորեաններից ի յիշատակ բժ. տէր-Գրիգորեանի 20 ր., պ. տէր-Մարգարեանից 20 ր., օր. Ս. Բայսողօլեանի հանգանակած 37 ր., պ. Արշակ Յակոբջանեանի հանգանակած 25 ր. 50 կ. և ուրիշներից 100 ր. 95 կոպ.։

Վարչութիւնս իր քաղցր պարտականութիւնն է համարում յայտնելու իր խորին շնորհակալութիւնը բոլոր այն նուիրատուներին, որոնք իրանց մարդասիրական վերաբերմունքով քաջալերում են, մեզ զգալ տալով, որ կան որբերին կարեկցող անձինք։

1910 թուի տարուայ ընթացքում ընկերութիւնս մուտք է ունեցել 4460 ր. 35 կոպ. իսկ ծախսուել է 3576 ր. 46 կ.։ Ընդհանուր մուտքից մնացել է 883 ր. 89 կ., որը և աւելացել է, ընկերութեան գումարին։ Առաջիկայ 1910 թուականից վարչութիւնս մտադիր է աւելացնել նաև մի որբ։

Որբանոցի երեխաների հետ իր բարեհաճ ցանկութեամբ պարապել է արժանապատիւ հայր Ալիխանեանը. բարոյագիտական դասերով։ Ձրի բժշկել են բժիշկներ ատամնաբոյժ, օր. Սոֆեա Ստեփանեան, պ. պ. Տիգրան Գէորգբէգեան, Տիգրան Թաթէոսեան, Ն. Ումիկով, Շահվերդեան, ձրի ընդունուել են որբեր հետևեալ դպրոցներում՝ Սմբատեան ամուսինների դպրոցում 1 հոգի, Յովնանեան դպրոցում 1, և Գայեանեան դպրոցում 3 հոգի։

Նպաստել են ընկերութեանս անդամուհիների թիւը աւելացնելում. իսկական անդամուհիներ տիկնայք Աննա Աթաբէկեան, Սրբուհի Տարբաբչեան, Վարդուհի Յովհաննիսեան, Վարվառէ Տէր-Սարգսեան, Շուշանիկ տէր-Յակոբեան. օրիորդներ Վարվառէ Սայեաթնեան և Վարվառէ Լալայեան։ Վերոյիշեալ բոլոր անձանց վարչութիւնս յայտնում է իր սրտանց շնորհակալութիւնը, որ աջակցում են մեզ թեթևացնելով որբերին խնամելու գործը։

Վարչութիւնս յայտնել է իր ցաւակցութիւնը ամենայն հայոց վեհափառ Կաթողիկոս Մատթէոս II-դի մահուան առթիւ, նորին վեհափառութեան տեղակալ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանին։

1910 թուի ընթացքում ունեցել է վարչական հերթական 40 նիստ երեքշաբթի օրերը, ունեցել է նաև խառն ժողովներ ուրբաթ օրերը ժամի 1 ից—3-ը իր անդամուհիների և կողմնակի անձանց համար։

Որբանոցի երեխաներին բաւականութիւն են պատճառել տանելով ցիրկ, սինեմատոգրաֆ և սարքելով տօնածառ։ Այդ բոլորին նպաստել են և կողմնակի անձինք, որոնց նոյնպէս վարչութիւնս յայտնում է իր շնորհակալութիւնը։

# ՈՐԲԵՐԻ ԱՆՒԱՆԱՑՈՒՑԱԿԸ

## 1910 ԹՒԻ

| Որբերի Անուն եւ Ազգանուններ | I<br>Երբ են ծնվել | II<br>Որտեղացի են | III<br>Երբ են ընդունվել | IV<br>Որբ է թէ կիսաորբ | V<br>Որտեղ են սովորում |
|---|---|---|---|---|---|
| 1 Աղախանեան Աւետիք | 1901 թ. 11 մայիսի | Զանգեզուրցի | 1907 թ. մայիսին | Որբ է | Քաղաքային դպրոց |
| 2 Աղախան. Համբարձում | 1898 թ. 7 մարտի | Զանգեզուրցի | 1907 թ. մայիսին | Որբ է | Քաղաքային դպրոց |
| 3 Ամբրուզեան Մարգարիտ | 1897 թ. 7 ապրիլի | Թիֆլիզեցի | 1907 թ. մայիսին | Որբ է | Քաղաքային դպրոց |
| 4 Դովլաթեան Վաղինակ | 1900 թ. 1 մայիսի | Նոր Բայազէթցի | 1908 թ. | Կիսաորբ է | Գ. Սմբաթեանի ուսումնար. |
| 5 Լևոնեան Շաւարշ | 1901 թ 25 սեպտեմ. | Պարսկաստանցի | 1907 թ. յունիսին | Կիսաորբ է | Քաղաքային դպրոց |
| 6 Խաչատրեան Շողակաթ | 1899 թ. 7 սեպտեմ. | Թիֆլիզեցի | 1907 թ. մայիսին | Որբ է | Քաղաքային դպրոց |
| 7 Աւետիսեան Արշալոյս | 1897 թ. 8 փետր. | Շուշեցի | 1907 թ. մայիսին | Որբ է | Ջգրաշէնի ուսումնարան |
| 8 Կոլոտեան Համասփիւռ | 1898 թ. 8 սեպտ. | Սարիղամիշցի | 1907 թ. յուլիսին | Կիսաորբ է | Գայիանեան դպրոց |
| 9 Ղարադեօզեան Կարապետ | 1902 թ. 8 յունվ. | Ախալցխացի | 1907 թ. սեպտեմ. | Կիսաորբ է | Քաղաքային դպրոց |
| 10 Միրիգոզեան Աստղիկ | 1899 թ. 4 յունիսի | Թիֆլիզեցի | 1908 թ. | Որբ է | Քաղաքային դպրոց |
| 11 Մովսիսեան Արփենիկ | 1902 թ. 24 յունիսի | Վանեցի | 1908 թ. | Կիսաորբ է | Յովնանեան դպրոց |
| 12 Յարութիւնեան Աստղիկ | 1898 թ. | Ալէքսանդրապոլցի | 1907 թ. մայիսին | Որբ է | Գայիանեան դպրոց |
| 13 Բաբեան Գրիգոր | 1900 թ. 20 մայիսի | Թիֆլիզեցի | 1908 թ. | Կիսաորբ է | Քաղաքային դպրոց |
| 14 Սարգսեան Մամիկոն | 1899 թ. 20 մայիսի | Ախալցխացի | 1907 թ. մայիսին | Որբ է | Քաղաքային դպրոց |
| 15 Փիլիպպոսեան Աբգար | 1899 թ. 20 մայիսի | | 1907 թ. | Կիսաորբ է | Քաղաքային դպրոց |
| 16 Գրիգորեան Աստղիկ | 1901 թ. 4 յունվ. | Ախալցխացի | 1909 թ. | Հայրը խելագար, իսկ մայրը տկար | Քաղաքային դպրոց |
| 17 Սուլթանեան Անահիտ | 1903 թ. 1 մարտի | Թիֆլիզեցի | 1909 թ. | Կիսաորբ է | Ջգրաշէնի ուսումնարան |
| 18 Նալբանդեան Սաթենիկ | 1902 թ. 5 սեպտ. | Թիֆլիզեցի | 1909 թ. | Որբ է | Ջգրաշէնի ուսումնարան |
| 19 Շամախեան Գենոֆէ | 1897 թ. 1 սեպտ։ | Շուշեցի | 1909 թ. | Կիսաորբ է | Քաղաքային դպրոց |
| 20 Պետրոսեան Սիրանոյշ | | Թիֆլիզեցի | 1909 թ. | Որբ է | Ջգրաշէնի ուսումնարան |
| 21 Սևակեան Արտեմիս վճար. | | | 1909 թ. | Որբ է | Գայիանեան դպրոց |
| 22 Բաղչեան Թամարա վճար. | | Թիֆլիզեցի | 1910 թ. սեպտեմբ. | | Իշխ. Արղութեանի ուսում. |
| 23 Տէր-Յակոբեան Նունէ վ. | | Թիֆլիզեցի | 1909 թ. | | Սեպտեմբ. դուրս է եկել որբանոցից։ |

# ՄՈՒՏՔ

## 1910

| Մուտք | Իսկական | | Եկամուտ | | 1910 թ. Նախահաշիւ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ռուբլ. | Կ. | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
| Իսկական անդամուհիներից . | 1351 | | | | | |
| Օժանդակող անդամներից . . | 94 | | | | | |
| 1909 թուի ապառիկ մնացած անդամավճարներից, (որից 12 ռուբ. վճարել է անդամուհի տ. Նատալիա Տէր-Յովհաննիսեանը). ընդ. . | 25 | 50 | 1470 | 50 | 1500 | |
| Որբ Սեւակեանի համար վճարած. | | | | | | |
| Տիկ. Մարգարիտ Աբեան . . | 60 | | | | | |
| Իշխ. Մարիամ Թումանեան . | 55 | | | | | |
| Հայոց Բարեգործական Ընկ. | 5 | | | | | |
| Գիշերօթիկ Տէր-Յակոբեանի . | 98 | 50 | | | | |
| Գիշերօթիկ որբ Թամարա Բախչեանից . . . . | 44 | 30 | 262 | 80 | 308 | |
| Ներկայացումից և զբօսանքից . | | | 1178 | 27 | 1000 | |
| Նուիրատուութիւններից . . | | | 1168 | 40 | 600 | |
| % անձեռնմխելի գումարից . | 57 | 19 | | | | |
| % ընթացիկ հաշուից. . . | 323 | 19 | 380 | 38 | 407 | |
| Գանձապահի մօտ . . . | 805 | 90 | | | | |
| Ընթացիկ հաշւում . . . | 1813 | 40 | | | | |
| Տոկոսաբեր արժեթխթերով. . | 6000 | | 8619 | 30 | | |
| Ընդամենը | | | 13079 | 65 | 3815 | |

Բացի վերոյիշեալներից եղ. Տովմասեանների առևտրական տան օբլիգացիան 200ր. արժողութեան:

Ծանօթ. 1909 թ. ապառիկ է մնացել 20 ր. 50 կ., իսկ 1910 թուին 67 ր. չը ստացուած անդամավճարներից:

# ԵԼՔ

## 1911

| Ելք | Իսկական | | Ծախք | | 1910 թ. Նախահաշիւ |
|---|---|---|---|---|---|
| | Ռուբ. | Կ. | | | |
| Վարժուհու ռոճիկ . . . | | | 300 | | 300 |
| Աշխատաւորներին ռոճիկ . . | | | 308 | 95 | 372 |
| Բնակարանի վարձ . . . | 300 | | | | |
| Ջրի . . . | 74 | 67 | | | |
| Մի սենեակ աւելացնելու. . | 199 | 50 | 574 | 17 | 550 |
| Հագուստեղէնի և իրեղէնների . | | | 336 | 65 | 220 |
| Վառելիք և լուսաւորութիւն . | | | 182 | 37 | 270 |
| Դեղորայք . . . | | | 86 | 49 | 160 |
| Ուսման վարձ և դասական պիտոյքներ . . . | | | 104 | 91 | 130 |
| Դիւանական և տպագրական ծախ. | | | 55 | 15 | 60 |
| Ամառանոցի բնակարանի վարձ և ճանապարհածախս . . | | | 89 | | — |
| Մանր ծախս . . . | | | 155 | 47 | — |
| Անակնկալ ծախսեր . | | | | | 200 |
| Մթերքներ: Հաց . . . . | 410 | 26 | | | |
| Միս . . . . | 269 | 84 | | | |
| Կաթ . . . . | 123 | 2 | | | |
| Շաքար թէյ և սուրճ . . | 167 | 72 | | | |
| Պանիր իւղ և ձէթ. . | 81 | 41 | | | |
| Բրինձ ձաւար և այլ մթերք. | 147 | 44 | | | |
| Առօրեայ ծախսերի . | 183 | 60 | 1383 | 29 | 1258 |
| Ընդամենը | | | 3576 | 46 | 3520 |
| Աւելացել է նախահաշուին . . | | | | | 295 |
| Աւելացած է 1911 թուին գանձապահի մօտ . . . | 621 | 10 | | | |
| Ընթացիկ հաշւում . . | 2882 | 9 | | | |
| Տոկոսաբեր արժեթղթերով. | 6000 | | 9503 | 19 | |
| Ընդամենը | | | 13079 | 65 | 3815 |

# ՆԱԽԱՀԱՇԻՒ 1911 ԹՈՒԻ

| Մուտք | Ռուբ. |
|---|---|
| Իսկական անդամներից . . . . | 1400 |
| Նուիրատուութիւններից . . . . | 700 |
| Քաղաքային ինքնավարութիւնից . . . . | 100 |
| Զբօսանքից և ներկայացումից . . . . | 1000 |
| %-ներ ընթացիկ հաշուից. . . | 324 |
| Տոկոսաբեր արժեթղթերից . . . . | 92 |
| Գիշերօթիկ Թամարա Բաղչեանի վճար . . | 156 |
| Որբ Սահակեանի վճար . . . . | 120 |
| Ընդամենը | 3892 |

| Ելք | Ռուբ. |
|---|---|
| Կառավարչուհուն և ուսուցչին . . . . | 360 |
| Աշխատողներին. . . . . . | 330 |
| Տան վարձ և ջուր . . . . | 350 |
| Լուսաւորութեան և վառելիքի . . . . | 200 |
| Դեղորայքի . . . . . . | 100 |
| Դասական պիտոյքների և ուսման վարձ . . . | 100 |
| Դիւանական տպագրական ծախս. . . . | 60 |
| Մանր ծախս . . . . . | 150 |
| Հագուստեղէնի և իրեղէնի . . . | 350 |
| Մթերքների . . . . . . | 1400 |
| Անակնկալ ծախսերի . . . . | 180 |
| Ընդհ. մուտքից աւելացած ընդհ. գումարին. . | 312 |
| Ընդամենը | 3892 |

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1004
15361

# Средства Общества

## отъ 1-го января 1910 года по 1-ое января 1911 года

| Приходъ | Дѣйствительн. Рубли | К. | Рубли | К. | Смѣта. Рубли | К. |
|---|---|---|---|---|---|---|
| Отъ дѣйствительн. членовъ | 1351 | | | | | |
| Отъ членовъ Соревнователей | 94 | | | | | |
| Долгъ нѣкоторыхъ член. 1909 г. | 25 | 50 | 1470 | 50 | 1500 | |
| За пансіон. сироты Севакянъ. | | | | | | |
| Абіанъ Маргарита | 60 | | | | | |
| Кн. Туманова Марія | 55 | | | | | |
| Мужск. благотворительн. О-во | 5 | | | | | |
| За пансіонерку Теръ-Акопову | 98 | 50 | | | | |
| За пансіонъ сироты Бахчіевой | 44 | 30 | 262 | 80 | 308 | |
| Отъ спектакля и гулянія | | | 1178 | 27 | 1000 | |
| Единовремен. пожертвованія | | | 1168 | 40 | 600 | |
| % съ суммы наход. на текущ. сч. | 57 | 19 | | | | |
| % съ билетовъ на вкладъ | 323 | 19 | 380 | 38 | 407 | |
| **Итого** | | | 4460 | 35 | 3815 | |
| Остатокъ съ 1909 года: | | | | | | |
| У казначея | 805 | 90 | | | | |
| На текущемъ счету | 1813 | 40 | | | | |
| Билеты на вкладѣ | 6000 | | 8619 | 30 | | |
| **Всего** | | | 13079 | 65 | 3815 | |

Кромѣ вышеупомянутаго, О-во получило въ 1910 году Облигацію на 200 руб. Торговаго дома бр. Цовіановыхъ и К°.

Примѣчаніе. Общество имѣетъ получить отъ нѣкоторыхъ членовъ взносы за 1909 г.—20 руб. 50 к. и за 1910 годъ—67 р.

| Расходъ | Дѣйствительн. Рубли | К. | Рубли | К. | Смѣта Рубли |
|---|---|---|---|---|---|
| Учительницѣ | | | 300 | | 300 |
| Служащимъ | | | 308 | 95 | 372 |
| Квартира | 300 | | | | |
| Вода | 74 | 67 | | | |
| Прибавка комнаты | 199 | 50 | 574 | 17 | 550 |
| Окопировка и обзаведеніе | | | 336 | 65 | 220 |
| Освѣщеніе и отопленіе | | | 182 | 37 | 270 |
| Лѣкарство | | | 86 | 49 | 160 |
| Учебныя пособія и за правоученія | | | 104 | 91 | 130 |
| Типографскій и канцелярскій | | | 55 | 15 | 60 |
| Дача и переѣздъ | | | 89 | | — |
| Мелкій расходъ | | | 155 | 47 | — |
| Непредвидѣнный | | | | | 200 |
| Продовольствіе: Хлѣбъ | 410 | 26 | | | |
| Мясо | 269 | 84 | | | |
| Молоко | 123 | 2 | | | |
| Сахаръ, чай, кофе | 167 | 72 | | | |
| Масло, сало | 81 | 41 | | | |
| Крупа, овощи и др. | 147 | 44 | | | |
| Ежедневный расходъ | 183 | 60 | 1383 | 29 | 1258 |
| **Итого** | | | 3576 | 46 | 3520 |
| Перерасходъ | | | | | 296 |
| Переносится на 1911-ый годъ | | | | | |
| У казначея | 621 | 10 | | | |
| На текушемъ счету | 2882 | 9 | | | |
| Билеты на вкладѣ | 6000 | | 9503 | 19 | |
| **Всего** | | | 13079 | 65 | 3815 |

# Смѣта общества на 1911-ый годъ

| ПРИХОДЪ. | Рубли. | К. | Рубли. | К. |
|---|---|---|---|---|
| Взносы членовъ . . . . . | 1400 | | | |
| Пожертвованія . . . . . | 700 | | | |
| Отъ Тифлиск. городск. самоуправленія . | 100 | | | |
| $^0/_0$ съ билетовъ на вкладъ . . . | 324 | | | |
| $^0/_0$ съ суммы наход. на текущемъ счету. | 92 | | | |
| Съ гулянія и спектакля. . . . . | 1000 | | | |
| За пансіонерку Бахчіеву. . . . | 156 | | | |
| За пансіонерку Севакянъ . . . . | 120 | | | |
| Всего. . | 3892 | | | |

| РАСХОДЪ | Рубли. | К | Рубли. | К. |
|---|---|---|---|---|
| Жалованіе надзирательницѣ и Учительницѣ. . . . . . | 360 | | | |
| За квартиру и воду. . . . . | 350 | | | |
| Служащимъ . . . . . . | 330 | | | |
| Отопленіе и освѣщеніе . . . . | 200 | | | |
| Лѣкарство . . . . . . | 100 | | | |
| Учебн, пособія и за правоученіе . . | 100 | | | |
| Мелкій расходъ . . . . . | 150 | | | |
| Канцелярск. и типографскій . . . . | 60 | | | |
| Окопировка и обзаведеніе. . . . | 350 | | | |
| Продовольствіе. . . . . . | 1400 | | | |
| Непредвиденный . . . . . | 180 | | 3580 | |
| Прибавка къ капиталу Общества . . . | | | 312 | |
| Всего. . | | | 3892 | |

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

| | Ռուբ. | Կոպ. |
|---|---|---|
| Գ. պ. Տիգրան և Բագրատ Վարդանեաններից ի յիշատակ իրանց հօր Կարապետ Վարդանեանի . | 250 | |
| Կոյս Իսկուհի Էնֆիաճեանի նուիրած եղբայրք Ծովեանեանների առևտրական տան և ընկերութեան երկու հարիւր (200) րուբլու արժողութեամբ օբլիկացիա: | | |
| Ժողովարանի աւագների խորհրդից. . . . | 100 | |
| Քաղաքային ուպրաւայի ինքնավարութիւնից . . | 100 | |
| Քաղաքային Վարկի ընկերութիւնից . . . | 100 | |
| Գ. Կուսիկեանի ընտանիքից ի յիշատակ հանգուցեալ Վառլամ Կուսիկեանի . . . . . | 100 | |
| Գ. պ. Տիգրան և Բագրատ Վարդանեաններից իրանց հօր տարելիցի առթիւ. . . . . | 50 | |
| Տիկ. Սօֆեա Գրիգորեանից ի յիշատակ իր ամուսնու Զաքարեա Գրիգորեանի . . . . | 50 | |
| Տիկ. Եղիսաբէթ Ենիկոլոպեանից ի յիշատակ իր սկեսրոջ . . . . . . | 50 | |
| Օր. Սուսաննա Բայատօղլեանի հանգանակած . . | 37 | |
| Պարոն Արշակ Յակոբջանեանից իրանց խանութում հանգանակած . . . . . . | 25 | 50 |
| Բժիշկ Տէր Գրիգորեանի յիշատակին . . . | 25 | |
| Իշխ. Աննա Արղութեանից ի յիշատակ բժիշկ Աղամալեանի . . . . . . . | 25 | |
| Տիկ. Շուշանիկ և պ. Գասպար Տէր-Մարգարեաններից հանգուցեալ Բուղդան Դօլուխանեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն. . . . | 25 | |
| Տիկ. Մարիամ Կաֆեանից իր հօր, հանգուցեալ Բահաթրեանի յիշատակին . . , . . | 25 | |
| Իշխ. Աննա Արղութեանից և իր քոյրերից եղբօրից իրանց հանգուցեալ մօր դագաղի վրա պսակ դնելու փոխարէն. . . . . . | 30 | |
| Օր. Ն. Մ.-նց . . . . . . . | 30 | |



| | Ռուբ. | Կոպ. |
|---|---|---|
| Պարոն Զաքարեա տ. Սօֆիա Գրիգորեաններից ի յիշատակ բժ. Տէր Գրիգորեանի. . . . | 20 | |
| Պարոն Գասպար Տէր-Մարգարեանից . . . | 20 | |
| Պարոն Ալեքսանդր Խաչատրեանից . . . | 10 | |
| Տիկ. Եղիսաբէթ Սուլթան Շախից. . . . | 10 | |
| Տիկ. Շահվերդեանից ի յիշատակ իր եղբօր . . | 10 | |
| Տիկ. Դարեա Սիմոնովայից ի յիշատակ իր հանգուցեալ որդուն . . . . . | 10 | |
| Տիկ. Եղիսաբէթ Աֆրիկեանից ի յիշատակ իր քրոջ որդուն. . . . . . . . | 10 | |
| N N ի յիշատակ Սիմոնովայի որդուն . . . | 5 | |
| Տիկ. Մարիամ Բէժանբէկից ի յիշատակ իր դստեր Հեղինէի . . . . . . . | 6 | |
| Տիկ. Մարիամ Աղբաշեանից. . . . . | 5 | |
| Տիկ. Սուսաննա Մխիթարեանի միջոցաւ. . . | 3 | |
| Տիկ. Դարիա Սիմոնովայից . . . . | 3 | |
| Պարոն Պաարեվից . . . . . . | 3 | |
| Տիկ. Մարիամ Չախմախչեանից . . . . | 4 | |
| Տիկ. Նատալիա Շալամեանից . . . . | 5 | |
| Տիկ. Աննա Գուլևից . . . . . | 3 | |
| Տիկ. Վարվառէ Տէր-Սարգսեանից . . . . | 2 | |
| Պարոն Ղազարոս և Միքայէլ Յակոբջանեաններից . | 2 | |
| Մի ուսանողուհուց . . . . . . | 1 | |
| Նուիրած իրերի վաճառումից . . . . | 3 | 95 |
| Բախտի անիւի վարձ . . . . . | 3 | |
| Տիկ. Բաղչեան Եղիսաբէթ . . . . | 3 | |
| Տիկ. Բադրեան Փափակ . . . . . | 2 | |

# ԻՐԵՐՈՎ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Կոյս Խսկուհի Ընփիաճեանից Աղբիւր ամսաթերթը Զատկահաց, ներկած ձու և պանիր։

Օր. Ս. Բայսողօլեանից մի զոյգ մոմակալներ և այլ մանր իրեր։

Փոքրիկ Ակիմ Թամիրեանից գրքեր։

Օր. Փուզինեանից, Իշ. Մ. Թումանեանից, տ. տ. Սաֆարեանից, Աննա Մալեանից Դարեա Սիմոնովայից, Շուշանիկ Մխիթարեանից, Իշ. Ա. Արզումեանից, Սաթենիկ Քալանթարեանից, Եղիսաբէթ Աֆրիկեանից. Մ. Գերասիմենկօից, Եղիզարեանից Մ. Զաւրևից, Շարբաբչեանից, զանազան գործածուած հագուստեղէններ։

Տիկին Տէր-Գրիգորեանից գրքեր, երկու պատկեր, մի մահճակալ, կերասինկայ, լուացքի տաշտ. և այլ իրեր։

Տիկ. Ս.-ից զատկահաց և գործածուած հագուստեղէն։

Տ. Վարդանեանից զանազան մրգեղէն։

Տ. Մարեամ Տիգրանեանից մի դիւժ. նոր կարած սպիտակեղէն տղայոց և աղջկերանց համար։

Տ. Ենիկոլոպեանից 22 հատ գրքեր։

Տ. Խոսրովեանից գործածուած հագուստներ, գրքեր և խաղալիքներ։

Տիկ. Շ. Եղանեանից մեծ զամբիւղ խաղող, դեղձ և խմորեղէն։

Տ. Սաթենիկ Կաֆեանից մի մահճակալ և մատրաս։

Տիրուհի Տարիելեանից գլխարկ և պայուսակ։

Արժ. քահանայ Մատինեանից Շուշանիկի պատկեր։

Պ. Կիրակոզով և Օզանով առևտրական տնից երկու դիւժին Թաշկինակ։

Պար. Ա. Ջանշիևից, տիկ. Գուլևից և տիկին Ա. Միխայլովայից տօնածառի զարդարանքներ։

Տ. Մարգարիտ Աբեանից շաքար, թէյ, իւղ, զանազան տեսակ մրրգեղէն և կանֆետ։



Հացթուխ Խ. Գուլեանից խմորեղէն։

Տ. Ս. Զաթալբաշեանից գրքեր։

Տ. Ս. Շարբաբչեանից կուլիչ և զանազան հագուստեղէն։

Օր. Ա. Փուզինեանից գործածուած հագուստ և զատկահաց։

Բժիշկ Մխիթարեանից մի գառ։

Տ. Կատարինէ Մալեանից մի զատկահաց։

Տ. Ս. Վարդանեանից մի զատկահաց և ներկած ձու։

Տ. Ս. Պետրոսեանից ներկած ձու։

Գրիգոր և Կէտի Զանազեաններից մի զատկահաց և զանազան գործածուած հագուստեղէն.

Տ. Օրբէլիից մի կողպէք և կացին։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библ…
7/XI 1922
ИМЕНИ А. МЯСНИК…
*Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ*

# ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Մայրապետ Աբամէլիքեան Ցեփրոսինէ
օր. Արշալոյսեան Շամունէ
† Կոյս Ընֆիաճեան Իսկուհի
Պ. Մէլիք-Ազարեան Ալեքսանդր

Իսկական անդամուհիներ 12 ռուբլուց աւելի վճարող

Տ. Գէորգեան Սոֆիա Մին. 25 ր.
Տ. Քալանթարեան Սաթենիկ, 20 ր.
Տ. Գուլազեան Վարդուհի, 20 ր.
Իշխ. Բէհբութեան Եղիսաբէթ 15 ր.

Տարեկան 12 ռուբ. վճարողներ

տ. Աբեան Մարգարիտ.
տ. Աթաբէգեան Աննա.
տ. Աւետիսեան Ոսկի.
10 տ. Առաֆելեան Սոֆիա.
օր. Առաֆելեան Աննա.
տ. Առաֆելեան Սոֆիա.
տ. Աֆրիկեան Եղիսաբէթ.
օր. Բայսօղոլեան Սուսաննա.
տ. Բատրեան Օլգա.
տ. Բարինագօ Լիւբով.
† տ. Բաւէնցեան.
տ. Բէժանբէգ Սոֆիա.
տ. Բօղարջեան Սոֆիա.
տ. Գուլե Աննա.
տ. Դաւթեան Կատարինէ.
20 տ. Թումանեան Եղիսաբէթ.
օր. Խօսրովեան Նինա.
տ. Կարգանեան Նինա.
տ. Կաֆեան Սաթենիկ.
տ. Կաֆեան Նունէ.
տ. Կաֆեան Տիրուհի.
տ. Միլեան Վարվառէ.
տ. Միրիմանեան Կատարինէ.
տ. Միրաքեան Նունէ.
տ. Մելիքեան Սոֆիա.
30 տ. Մխիթարեան Սուսաննա.
տ. Միլեան Մարիամ.
տ. Միրաքեան Մարիամ.
տ. Յարութիւնեան Մարիամ.
տ. Շարբաբչեան Սրբուհի.
տ. Շահվերդեան Եփեմիա.
տ. Ջաթալբաշեան Սոֆիա.
տ. Պսարև Նինա.
տ. Պետրոսեան Սաթենիկ.
տ. Պետրոսեան Թագուհի
40 տ. Ռոստինեան Նատալիա.
տ. Վարդանեան Նինա.
տ. Վարդանեան Նատալիա.
տ. Տէր-Մարգարեան Շուշանիկ.
տ. Տէր-Միքայէլեան Մաքրուհի,
տ. Տէր-Աբրահամեան Եղիսաբէթ.
տ. Տէրեան Նատալիա.
տ. Քալանթարեան Շուշանիկ.
տ. Քալանթարեան Սոֆիա.
տ. Քաջարեան Մարիամ.

Տարեկան 10 ռուբ. վճարողներ

50 տ. Անտօնեան Կատարինէ.
տ. Գիւլբէնգեան Զարուհի.
տ. Եղիազարեան Աննա.
տ. Զարգարեան Նունէ.
տ. Թունունց Գայիանէ.
օր. Ծուրինեան Նատալիա.
տ. Կաֆեան Մարիամ.
տ. Մալեան Կատարինէ.
տ. Մալեան Աննա.
տ. Յովհաննիսեան Վարդուհի.
60 տ Շահլամեան Նատալիա.
տ. Սէլիկեան Հեղինէ.
տ. Վարդանեան Աննա.
օր. Փուղինեան Աննա.
տ. Սարգսեան Մարիամ (8 ռուբ.)



Տարեկան 6 ռուբ. վճարողներ

իշ. Արղութեան Աննա.
տ. Ալիբէգեան Նինա.
տ. Ամիրաղեան Զարուհի.
տ. Ալիխանեան Վարվառէ.
տ. Այրեսեան Անահիտ.
70 տ. Ամիրաղեան Եղիսաբէթ.
տ. Ազամալեան Գիւլիզար.
տ. Ազայեան Նատալիա.
տ. Աւետիսեան Հերսիլիա
տ. Ալմօյեան Տիրուհի.
տ. Աղբաշեան Մարիամ.
օր. Աբէլեան Մարգարիտ.
տ. Գէորգեան Աննա.
տ. Դամբարեան Նունէ.
տ. Գասպարեան Նատալիա.
80 տ. Դանդուրեան Վարսենիկ.
տ. Դանիելեան Սոֆիա.
օր. Երզնկեան Անահիտ.
տ. Եարգուլեան Լիւսիա.
տ. Զօրեան Եղիսաբէթ.
իշ. Թումանեան Աննա.
տ. Խօջամիրեան Սաթենիկ.
տ. Խօջայեանց Բալասան.
տ. Խօսրովեան Սոֆիա.
տ. Կրէթեան Օվսաննա.
90 տ. Կոստանեան Հեղինէ.
տ. Ղամբարեան Սիրանոյշ.
տ. Մարտիրոսեան Հայկանոյշ.
տ. Մաղաթեան Նատալիա.
Տիր. Մատինեան Վարվառէ.
տ. Մարութեան Սոֆիա.
օր. Մէլիք Հայկազեան.
տ. Նալբանդեան Մարիամ.
տ. Նահապետեան Եւա.
տ. Յովհաննիսեան Դարիա.
100 տ. Շահլամեան Մարիամ.
տիր. Սահակեան Վարդուհի.
տ. Սէյլանեան Տիրուհի.
տ. Սէյլանեան Վարդուհի.
տ. Սարգիսեան Նւարդ.
տ. Վարդանեան Հռիփսիմէ.
տ. Տէր-Ազարեան.
տ. Տէր-Խաչատրեան Ղումաշ.
տ. Տէր-Անտօնեան Շուշանիկ.
տ Տէր-Յակոբեան Սոֆիա.
110 տ. Փիթոյեան Նադեժդա.
տ. Քալանթարեան Վարդուհի
տ. Օրբէլի Վարվառէ.
տ. Օքօյեան Սաթենիկ.
տ. Իւզբաշեան Սոֆիա.

տարեկան 5 ռուբ. վճարողներ

տ. Բաղրեան Նունէ.
տ. Բաղրեան Դարինկա.
տ. Բահաթրեան Մարթա.
տ. Գէորգեան Սոֆիա. Պ.
տ. Գատտախաբաղզէ Վարվառէ.
120 տ. Դօլուխանեան Եւգենիա.
տ. Դօլուխանեան Եւգենիա.
տ. Դանդուրեան Էփեմիա.
տ. Եղիազարեան Եղիսաբէթ.
տ. Տէր-Յովսէփեան Եղիսաբէթ.
տ. Քալանթարեան Սոֆիա.
տ. Եղիգարեան Օլգա.
տ. Խամփոյեան.
տ. Կուսիկեան Մարիամ.
տ. Հասան-Ջալալեան Աստղիկ.
130 տ. Ջիթօղցեան Աննա.
տ. Մատինեան.
տ. Նանասեան Կատարինէ.
տ. Շահպարոնեան Ռոզալիա,
տ. Տիգրանեան Եղիսաբէթ.
տիր. Տարխէլեան Շուշանիկ.
տ. Քանդարեան Շուշանիկ.

Տարեկան 4 ռուբ. վճարողներ

կոյս. Գուլազեան.
կոյս. Բերուչեան Երմոնիա.
† կոյս. Ընֆիաճեան Իսկուհի.
140 կոյս. Խարազեան Շուշանիկ.
տ. Մկրտչեան Զարուհի.
տ. Տէր-Յակոբեան Սոֆիա.

## Տարեկան 3 ռուբ. վճարողներ

տ. Աւագեան Արուսեակ.
տ. Ալոյեան Սիրանոյշ.
տ. Այխազեան Նինա.
իշխ. Արղութեան Կատարինէ
օր. Աբրահամեան Հեղինէ.
տ. Աբրհամեան Մանուշակ.
տ. Բաշբէուկ-Մելիքեան Աննա։
150 իշխ. Բէհբութեան Կատարինէ.
տիկ. Բագրատունի Աննա.
օր. Գալաչեան Սօֆիա.
կոյս. Գուլուլեան Կատարինէ.
տ. Գրիգորեան Աստղիկ.
տ. Գուլուլեան Նատալիա.
տ. Գասպարեան Կատարինէ.
տ. Գրիգորեան Զարի.
տ. Դաւթեան Գայիանէ.
տ. Դաւթեան Հայկանդուխտ.
160 օր. Եղիազարեան Մարիամ.
տ. Զուրաբեան Սօֆիա.
տիկ. Զարթեղեան Աննա.
տ. Էյրանեան Շուշանիկ.
իշխ. Թումանեան Մարիամ.
տ. Թամազեան Եւա.
տ. Իվանեան Նունէ.
տ. Լիսիցեան Կատարինէ
տ. Լիսիցեան Մարիամ.
օր. Լալայեան Վարվառէ.
170 տ. Լոմիձէ Սիդօնիա
տ. Խօջամիրեան Գենովաբէ.
տ. Կիրակոսեան Հայկանոյշ.
տ. Ղազալչեան Մարիամ.
տ. Ղալաչեան Սօֆիա.
կոյս. Ղոնեան Հռիփսիմէ.
տ. Ճերմակեան Սրբուհի.
տ Մամուլեան Վերգինէ.
տ. Մանանդեան Վարվառէ.
օր. Մուրադեան Կատարինէ.
180 տ. Մելիք-Շահնազարեան։
տ. Մարեան Եղիսաբէթ.
տ. Յակոբեան Աղիզ.
տ. Յարութիւնեան Մանեա.
տ. Յարութիւնեան Եղիսաբէթ.
տ. Յովհաննիսեան Նունէ.
տ. Նազարեան Եղիսաբէթ.
օր. Նալբանդեան Հայկանուշ.
տ. Շահազիզեան Մարիամ.
օր. Շօշեան Մարիամ.
190 տ. Չայքէշեան Թամարա.
տ. Չմշկ.-Բալանթար. Վարվառէ.
տ. Պետրոսեան Արուսեակ.
տ. Պապովեան Եւգենիա.
տ. Ռոտինեան Սօֆիա.
տ. Ռօստոմեան Սալօմէ.
տ. Սիմոնեան Դարիա.
օր. Սուրգունեան Նինա.
տ. Սաֆարեան Օլգա.
տ. Սաղոյեան Տիրուհի.
200 տ. Սմբատեան Սրբուհի.
օր Սայեաթնեան Վարվառէ.
տ. Սունդուկեան Եւա.
օր Ստեփանեան Սօֆիա.
տ. Տէր-Գրիգորեան Օվաննա.
տ. Տէր-Միրաքեան Շուշանիկ.
տ. Տասալեան Օլգա.
տ. Տէր-Սարգսեան Սօֆիա.
օր. Տէր-Աբրահամեան Արփենիա.
տ. Տէր-Յարութիւնեան Լուսիկ.
210 տ. Տէր-Յակոբեան Շուշանիկ.
օր. Տէր Սարգսեան Մարիամ.
տ. Փուզինեան Նունէ.
տ. Քաթանեան Կատարինէ.
օր. Քալանթարեան Նատալիա.
տ. Քալանթարեան Թամարա.
կոյս. Ֆրանգուլեան Փեփրոնէ.

### Օժանդակող անդամներ.

| | |
|---|---|
| պ. Էնֆիաճեան Արտաշէս | 20 ր. |
| պ. Էլի-Միրզեան Լեոն | 15 ր. |
| պ. Կաֆեան Գաբրիել | 12 ր. |
| պ Սուրէնեան Ալեքսանդր | 10 ր. |
| պ. Խօջայեան Համազասպ | 6 ր. |
| պ. Ռօտինեան Գաբրիել | 6 ր. |
| պ. Պետրոսեան Մաղաք | 6 ր. |
| պ. Փուզինեան Գրիգոր | 5 ր. |
| պ. Օրբելի Ռուբէն | 5 ր. |
| արժ. քահ. Ամիրխանեան Տէր-Յովսէփ | 3 ր. |
| պ. Գալաչեան Խաչատուր | 3 ր. |
| պ. Մելիք Հայկազեան | 3 ր. |

## Վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը

Հայուհեաց Որբախնամ ընկերութեան վերաստուգիչ յանձնաժողովը քննելով ընկերութեան 1910 թւի հաշիւները և փաստաթղթերը գտաւ ճիշտ։

Անդամուհիներ { Մ. Կաֆեան
Վ. Միլեան
Հ. Նալբանդեան }

---

Ծանօթ. 1909 թւի անդամավճարների ընդ. գումարում հաշւում է նաև Տ. Տէր-Սարգսեանի որդու համար վճարած 13 ռուբ.

[illegible]

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0049055